ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 մարտի 2014թ. թիվ 73-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 6-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդված 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1 և 77^2 հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 159-Ա հրամանը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել 2014 թվականին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:

2. Վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական

հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում վարչական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

7. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. հունվարի 16-ի թիվ 6-Ա որոշումը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. մարտի 6
ք.Վանաձոր